ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ,ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ,ՏՆՏԵՍԱԿԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 14

14 հոկտեմբերի 2024 թվական

Տեղի ունեցավ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովի N 04 նիստը: Նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Լիլիթ Ենգիբարյանը, Աննա Գևորգյանը, Իրինա Սիրունյանը և Հրայր Ասատրյանը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվեց ՀՀ Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինասատնտեսագիտական և գնումների բաժնի պետի կողմից ներկայացված **Խոյ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 168- N որոշման մեջ լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին»** նախագիծը՝ Խոյ համայնքի 2024 թվականի օգոստոսի 26-ի ավագանու հերթական նիստում :

Նիստում քննարկվեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի բյուջեի եկամտային մասի՝ Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ՝ ավելացնել ՝62 000 000 ՀՀ դրամ գումար և փոփոխություն կատարել ֆոնդային հոդվածների միջև՝ ավելացնել համապատասխան ծախսային հոդվածին՝ սուբվենցիոն ծրագրերով շինարարական աշխատանքների վճարման համար , ինչպես նաև ընթացիկ ծախսերի համար կատարել փոփոխություն վարչական բյուջեի հոդվածների միջև :

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի

և երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովը տալիս է հետևյալ եզրակացությունը՝

1. Տալ համաձայնություն կատարել լրացումներ եվ փոփոխություններ Խոյ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 168- N որոշման մեջ :

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝	ԼԻԼԻԹ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝	ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԻՐԻՆԱ ՍԻՐՈՒՆՅԱՆ
	ՀՐԱՅՐ ԱՍԱՏՐՅԱՆ